ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՀ 2022Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվարկները կատարված են ըստ առանձին մարմինների՝ նրանցից ստացված և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում (այսուհետ՝ Շտեմարան) առկա տեղեկությունների հիման վրա:

Ըստ 2022թ. հունվար ամսվա վճարման ցուցակների՝ համեմատվել են կենսաթոշակների՝ ներկայումս գործող և նախագծով առաջարկված կարգով (պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50%) հաշվարկված չափերը:

1. **Դատախազներ**

Ըստ Շտեմարանում առկա տեղեկատվության՝

Կենսաթոշակառուների թիվը՝ 332,

Միջին ամսական կենսաթոշակի չափը՝ 388,230 դրամ,

Մասնագիտական ստաժի միջին տևողությունը՝ 26.1 տարի,

Կենսաթոշակի ամսական գումարը՝ 128.9 մլն դրամ,

Կենսաթոշակի տարեկան գումարը՝ 1,549.7 մլն դրամ:

Ըստ դատախազության տրամադրած տեղեկությունների՝ 2022 թվականին կենսաթոշակի իրավունք ձեռք կբերի 12 անձ:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ նշանակված*** 332 կենսաթոշակառուներից կավելանա 8-ի կենսաթոշակը, որի դեպքում պետական բյուջեի ծախսերը կավելանան ամսական 198 հազար դրամով, իսկ տարեկան գումարը՝ 2,377.1 հազար դրամով:

Հաշվարկների նման պատկերը պայմանավորված է այն փաստով, որ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ հավելավճարների համար առավելագույն չափ սահմանված չի եղել կամ եղել է պաշտոնային դրույքաչափը: Արդյունքում 332 կենսաթոշակառուներից 112-ի հավելավճարը կազմում է պաշտոնային դրույքաչափի 100 կամ ավելի տոկոս, որից 12-ինը՝ 150 կամ ավելի տոկոս:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ գործող օրենսդրությամբ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած*** 12 անձանցից ոչ մեկի կենսաթոշակի հաշվարկային չափը չի ավելանա:

2. Հատուկ քննչական ծառայության քննիչներ

Ըստ Շտեմարանում առկա տեղեկատվության՝
Կենսաթոշակառուների թիվը՝ 15,
Միջին ամսական կենսաթոշակի չափը՝ 452,432 դրամ,
Մասնագիտական ստաժի միջին տևողությունը՝ 25.5 տարի,
Կենսաթոշակի ամսական գումարը՝ 6.8 մլն դրամ,
Կենսաթոշակի տարեկան գումարը՝ 81.4 մլն դրամ:

Ըստ հակակոռուպցիոն կոմիտեի տրամադրած տեղեկությունների՝ 2022 թվականին կենսաթոշակի իրավունք ձեռք կբերի 4 անձ:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ նշանակված*** 15 կենսաթոշակառուներից կավելանա 5-ի կենսաթոշակը, որի դեպքում պետական բյուջեի ծախսերը կավելանան ամսական 277.8 հազար դրամով, իսկ տարեկան գումարը՝ 3,333.1 հազար դրամով:

Հաշվարկների նման պատկերը պայմանավորված է այն փաստով, որ 15 կենսաթոշակառուներից 11-ի հավելավճարը գերազանցում է պաշտոնային դրույքաչափը:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ գործող օրենսդրությամբ կենսաթոշակի իրավունք ձեռք բերած*** 4 անձանց կենսաթոշակ նշանակվել է Հատուկ քննչական կոմիտեից ազատվելու օրը ներկայացված դիմումի հիման վրա և կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնելու հիմքով:

3. Քննչական կոմիտեի քննիչներ

Ըստ Շտեմարանում առկա տեղեկատվության՝
Կենսաթոշակառուների թիվը՝ 34,
Միջին ամսական կենսաթոշակի չափը՝ 178,996 դրամ,
Մասնագիտական ստաճի միջին տևողությունը՝ 18.4 տարի,
Կենսաթոշակի ամսական գումարը՝ 6.1 մլն դրամ,
Կենսաթոշակի տարեկան գումարը՝ 73.1 մլն դրամ:

Ըստ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկությունների՝ 2022 թվականին կենսաթոշակի իրավունք ձեռքբերող չի լինի:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 50% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ նշանակված*** 32 կենսաթոշակառուներից 20 և ավելի մասնագիտական (քննիչի) ստաժ ունի 13-ը, որոնց բոլորի կենսաթոշակը կավելանա: Այս դեպքում պետական բյուջեի ծախսերը կավելանան ամսական 796.4 հազար դրամով, իսկ տարեկան գումարը՝ 9,557.1 հազար դրամով:

Հաշվարկների նման պատկերը պայմանավորված է այն փաստով, որ գործող օրենսդրությամբ քննչական կոմիտեի նշված 13 քննիչների կենսաթոշակները հաշվարկվել են որպես զինծառայող ստացած դրամական բավարարման և սննդի փոխհատուցման գումարից, որը էականորեն ցածր է այսօրվա աշխատավարձերից:

Հավելավճարները կազմում են պաշտոնային դրույքաչափի առավելագույնը 30%:

4. Դատավորներ (ներառյալ ՍԴ դատավորներ)

Ըստ Շտեմարանում առկա տեղեկատվության՝

Կենսաթոշակառուների թիվը՝ 77,

Միջին ամսական կենսաթոշակի չափը՝ 532,763 դրամ,

Կենսաթոշակի ամսական գումարը՝ 41.0 մլն դրամ,

Կենսաթոշակի տարեկան գումարը՝ 492.3 մլն դրամ:

Պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի հանրագումարի 55% հաշվարկով ***01.01.2022թ. դրությամբ նշանակված*** 77 կենսաթոշակառուներից միայն 40-ի կենսաթոշակի գործում առկա է տեղեկատվություն պաշտոնային դրույքաչափի և հավելավճարի վերաբերյալ: 40 կենսաթոշակառուներից կավելանա 29-ի կենսաթոշակը, որի դեպքում պետական բյուջեի ծախսերը կավելանան ամսական 2,440.7 հազար դրամով, իսկ տարեկան գումարը՝ 29,288.2 հազար դրամով:

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ՀՀ 2022թ. պետական բյուջեի ծախսերը կավելանան ամսական 3.7 մլն դրամով, տարեկան՝ 44.5 մլն դրամով (հաշվարկների ընդհանուր արդյունքները կցվում է):

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում ՀՀ 2022թ. պետական բյուջեի լրացուցիչ ծախսերի գնահատականի վերաբերյալ

Պաշտոնի անվանումը	վերահաշվարկված կենսաթոշակներ		
	շահառուների թիվը	ամսական	տարեկան
Դատախազություն	**8**	**198.1**	**2,377.1**
հին նշանակումներ	8	198.1	2,377.1
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-
ՀՔԾ	**5**	**277.8**	**3,333.1**
հին նշանակումներ	5	277.8	3,333.1
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-
ՔԿ	**13**	**796.4**	**9,557.1**
հին նշանակումներ	13	796.4	9,557.1
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-
Ընդամենը դատախազներ+ՀՔԾ+ՔԿ	**26**	**1,272.3**	**15,267.3**
հին նշանակումներ	26	1,272.3	15,267.3
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-

Դատավորներ	29	2,440.7	29,288.2
հին նշանակումներ	29	2,440.7	29,288.2
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-

Ընդամենը Դատավոր+դատախազներ+ՀՔԾ+ՔԿ	**55**	**3,713.0**	**44,555.5**
հին նշանակումներ	55	3,713.0	44,555.5
2022թ. իրավունք ձեռք բերողներ	-	-	-